№ 46 ԿԻՐԱԿԻ 2 ՄԱՐՏԻ — 1914 — ԿԻՐԱԿԻ 2 ՄԱՐՏԻ № 46

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ԹԱՄԱՐԱ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՔԻՇՄԻՇԵԱՆ և իր զաւակները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՔԻՇՄԻՇԵԱՆԻ

մահը, որ տեղի է ունեցել փետրվարի 21-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, մարտի 2-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Բէհբութեան փող. № 2) դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

186. 2—1

ԵՒԳԵՆԻԱ և ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆՆԵՐԸ, ԱՆԱՀԻՏ և ՎԱՂԱՐՇԱԿ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՆԵՐԸ խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին

Ալէքսանդր Յովսէփեան ՔԻՇՄԻՇԵԱՆԻ

մահը, որ տեղի է ունեցել փետրվարի 21-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, մարտի 2-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Բէհբութեան փող. № 2) դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

187. 2—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խորին վշտով յայտնում է Ընկերութեան պատւաւոր անդամ և վարչութեան նախկին քարտուղար

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԻՇՄԻՇԵԱՆԻ

անակնկալ մահվան մասին։ Յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, մարտի 2-ին, իր բնակարանից (Бебутовская № 2) դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

188. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։ Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամէն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշեր
Ս. Պ. Շահպարոնեանց
(հ.կ.) առ. 868. 100—33

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Միխայլովսկայա փ. № 39. տ. Զաղէթեանի։
(չ.ու.կ.) առ. 901. 100—48

ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՒԱՆԴՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

«Մշակի» նախորդ համարներից մէկում Գանձակից տպված մի նամակից իմացվեց, որ այդ քաղաքի հայ հասարակութիւնը դիմումն է արել ուր հարկն է, որպէսզի հայոց լեզուի և կրօնի դասաւանդումը պարտադիր առարկայ լինի պետական դպրոցներում և այդ առարկաների ուսուցիչները հաւասար իրաւունքներ վայելեն միւս առարկաների ուսուցիչների հետ։

Այդ պահանջը որքան բնական և իրաւացի, նոյնչափ և առողջ մանկավարժութեան պահանջ է։

Նոյն պահանջը դրել է և վրաց հասարակութիւնը. նոյն պահանջը վաղուց դրել էր և լեհ հասարակութիւնը. և չը նայելով զանազան դիմադրութիւնների, այսօր Լեհաստանում պետական դպրոցների մէջ լեհական լեզուն և կրօնը պարտադիր առարկաներ են լեհերի համար։

Հասել է ժամը, որ Անդրկովկասում ևս, ուր երեք գլխաւոր բնիկ ազգագրական տարրեր կան—հայ, վրացի, Թուրք—մայրենի լեզուի և կրօնի ուսումը պարտադիր լինի պետական բոլոր դպրոցներում հայ, վրացի, Թուրք աշակերտների համար։

Եթէ առհասարակ ուսման և կրթութեան գլխաւոր նպատակն է պատրաստել բարոյական, կրթեալ, շիտակ և օգտակար քաղաքացիներ ու հպատակներ պետութեան համար, այդ նպատակին կարելի է հասնել ոչ թէ օտարացնելով ու խորթացնելով մանուկներին իրանց սեփական ազգութիւնից և կրօնից, այլ, ընդհակառակը, թոյլ տալով նրանց սովորել իրանց մայրենի լեզուն, վերահասու լինել իրանց կրօնի ճշմարտութիւններին։ Միայն լաւ ազգասէրները կարող են և լաւ քաղաքացիներ լինել. միայն մայրենի լեզուի օգնութեամբ կարելի է կատարելագործել աշակերտներին պետական լեզուի մէջ։ Եթէ պետական դպրոցներում աւանդվեն, իբրև պարտադիր առարկաներ, աշակերտների և մայրենի լեզուն ու կրօնը, նրանք անհամեմատ աւելի մեծ թւով աշակերտներ կը գրաւեն, քան այժմ, և որով կաւելանայ և պետական լեզուն իմացողների թիւը։

Պետութիւնը միշտ կրօնական կրթութեան կարևոր նշանակութիւն է տուել, իբրև հիմն բարոյական կրթութեան։ Բայց այդ իմանալով հանդերձ, պետական դպրոցներում օտարազգիների—հայերի, վրացիների և այլոց—կրօնի դասաւանդութիւնը այնպիսի պայմանների մէջ է դրված, որ հայ և վրացի աշակերտը, աւարտելով պետական դպրոցը, գրեթէ ոչինչ չը գիտէ իր դաւանութեան էութեան մասին։

Բոլոր լուսաւորեալ երկիրների մէջ մայրենի լեզուի ուսումը համարվում է մանկավարժութեան առաջնակարգ և ամենաառողջ պահանջ։ Եթէ մանուկը կցկտուր կամ թերի կերպով գիտէ իր մայրենի լեզուն, նա չէ կարող լաւ սովորել և պետական լեզուն, որ նրա համար օտար լեզու է։

Տալով տեղական լեզուներին իրանց արժանաւոր տեղը պետական դպրոցներում, հնարաւորութիւն տալով հայ, վրացի, Թուրք աշակերտին սովորել իր մայրենի լեզուն, իր դաւանած կրօնի էութիւնը՝ դրանով պետական դպրոցը կը տայ աշակերտին ամբողջական, լրացված կրթութիւն, դրանով նա կը պատրաստէ նրանից գիտակից քաղաքացի և բարոյապէս առողջ մարդ։

Մայրենի լեզուի ուսումը մեծ օժանդակ է պետական լեզուի ուսման և տարածման։

Ողջունել պէտք է երկրագործութեան մինիստրութեան այն որոշումը, որ Ժամհարեան ապագայ գիւղատնտեսական դպրոցի կանոնադրութեան մէջ հայոց լեզուի ուսուցումը ճանաչել է պարտադիր հայ աշակերտների համար և դրա համեմատ ևս լայն տեղ է տուել հայոց լեզուի և կրօնի դասերին։

Կրկնում ենք, հասել է ժամանակը, որ պետական դպրոցների վարչութիւնները համոզվեն, որ իբրև առողջ և խելացի քաղաքականութեան և մանկավարժութեան պահանջ՝ մայրենի լեզուի և կրօնի ուսումը պէտք է պարտադիր անել։

Հ. Առաքելեան

„Ս. Մ. ԿԻՐԱԿՕԶՕՎ ԵՒ Բ. Գ. ՕԳԱՆՕՎ"
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ
(Արմեանսկի բազար, Մանթաշեանի գօստինի դվորի ներսը № 39—40)
ՏԵԼԷՖՕՆ № 8—68.

Յայտնում է ի տեղեկութիւն պ. պ. գնողների, որ Թիֆլիսի իր պահեստում առաջիկայ գարնանային և ամառային սէզօնների համար ստացված են խոշոր քանակութեամբ զանազան տեսակի մօդային-մանուֆակտուրային ապրանքներ՝ ինչպէս ռուսական, նոյնպէս և արտասահմանեան յայտնի ֆիրմաների։

ԱՊՐԱՆՔԸ ԲԱՑ Է ԹՈՂՆՎՈՒՄ ՆԱԵՒ ԿՏՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ.
ՄԱՀՈՒԴԵՂԷՆ ԲՐԴԵՂԷՆ ՄԵՏԱՔՍԵՂԷՆ ՏԻՒԼԻ ՔԱԹԱՆԵՂԷՆ ԲԱՄԲԱԿԵՂԷՆ ԳՈՐԳԵՂԷՆ ԵՒ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐ։
(կ.հ.) առ. 174. 3—1

ԿՈՎԿ. Հ. ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
Կիրակի, մարտի 2-ին 1914 թ.
Հայ դերասանները սիրալիր մասնակցութեամբ սիրողների և ղեկավարութեամբ
Ա. ԱՐՄԵՆԵԱՆԻ
կը ներկայացնեն—I հայերէն լեզւով
ՀԱՄՐ ԿԻՆԸ կոմ. 2 գործ. Թարգմ. Գ. Երիցեանի։
II ռուսերէն լեզւով
ԻՆՁ ԵՆ ՍԻՐՈՒՄ ԿԱՆԱՅՔ կոմ. 1 գործ. Մազուրկեվիչի։
III
ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԻՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ. տ. տ. Դուրեան-Արմէնեան, Զարգարեան, Իսպանդարեան, Մինկեվիչ, Մանուչարեան, Սոլովիէվա-Սարախովա, Սիմէօնեան և Ցամրիկ։ Պ. պ. Արմէնեան, Ալլահվերդեան, Դիակօնենկօ, Եակօվլեվ, Էյրանով, իշխ. Թումանեան, Լեժավօ, Կարատով, Մամիկոնեան, Յարութինեան, Սերժ, Փիրումեան և Քափանակեան։
Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին։ Տեղերի գինը 3 ր. 10 կ. մինչև 40 կ.
Տոմսակները կարելի է ստանալ դահլիճում, մուտքի մօտ։
Ռեժիսոր՝ ԱՐՄԷՆԵԱՆ
Կարգադրիչ՝ Վ. ԱԼԼԱՀՎԵՐԴԵԱՆ
(կ.) առ. 177. 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
Ընդունելութիւն՝
Ամէն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արաս-Արագվսկայա հրապարակի և Լերմօնտովսկայա փողոցի, № 1.
(ե.հ.կ.) առ. 679. 74—67

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բեռլինի պրօֆ. Պօզների)
Վերադառնալով արտասահմանից, ներկայ տարվայ մայիս ամսից կը վերանորոգէ հիւանդների ընդունելութիւնը ՊԵՍՏԻ-ԳՈՐՍԿՈՒՄ։
(կ. հ.) առ. 104. 50—7

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամէն օր. 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23. тел. 7—92
(ա.օ.) առ. 977 100—88

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ
գունատիպ
Լոյս տեսած Վիէննայի Գաաֆիշէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է Թիֆլիսում մեծաքանակ—Մատինեանցի խանութում (Մադաթեան կղզի). իսկ հատով—«Ալան է Նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում։ Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%.
(2.) առ. 122. 25—3

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Յայտնի դարձաւ, որ ռուսաց և օսմանեան կառավարութիւնների միջև հայկական բարենորոգումների առիթով կատարվող բանակցութիւնները վերջացան։

Համաձայն մշակված նախագծի, հիմնվում են գեներալ-տեսուչների երկու պաշտօններ, որոնց վրա և պարտականութիւն է դրվում հսկելու վերոյիշեալ բարենորոգումները հայկական վիլայէթներում գործադրելուն։ Այդ երկու գեներալ-տեսուչները, ինչպէս նախագծում ասված է, ընտրվում են եւրոպական մեծ պետութիւններից և հաստատվում են Բ. Դրնից։ Թիւրքիան ի միջի այլոց պայման է դրել, որպէս զի տեսուչները ընտրվեն փոքր չէզոք տէրութիւններից։

Երկարատև խորհրդակցութիւնից յետոյ, ընտրութիւնը կանգ առաւ բելգիացի գեներալ Գիզի և գնդապետ Հանրիի վրա, որոնք և պէտք է կատարէին եւրոպական կառավարութիւնների և Բ. Դրան բարդ յանձնարարութիւնը։

Սակայն վերջին րոպէին բելգիացի յիշեալ ներկայացուցիչները հրաժարվեցին, և ներկայումս գեներալ-տեսուչներին նշանակելու հարցը նորից մնում է առկախ, ներկայանալով շահագրգռված կառավարութիւնների համար բաւականին դժուարութիւն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Տեղի ունեցաւ Սեմէնով-Տեանշանսկիի թաղումը։ Դագաղին դրված էր սպիտակ ծաղիկներից մի խաչ Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի և Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչի անունից։ Թաղմանը ներկայ էին պրինցուհի Ելէնա Գէօրգիէվնա Սաքսէն-Ալտէնբուրգսկայա, դուքս Միխայիլ Գէօրգիէվիչ, սենատօրներ, զանազան ընկերութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչներ։

«Россія» լրագիրը մի առաջնորդող յօդուածում կանգ է առնում գերմանական մամուլի՝ Ռուսաստանի դէմ սկսած յարձակումների վրա «Կեօլնի Լրագրի» հեռագրի առիթով։ Հերքելով ռուսաց կառավարութեանը վերագրվող ագրեսիվ մտադրութիւնները Գերմանիայի վերաբերմամբ՝ «Россія» լրագիրը հարցնում է. «Իսկ ինչի մէջ է արտայայտվում այդ ագրեսիվութիւնը։ Եթէ Ռուսաստանը մտածում է իր ռազմի ույժը զարգացնելու մասին, բայց չէ՞ որ Գերմանիան էլ նոյնն է անում, առաջ չը բերելով ոչ մի կշտամբանք ռուսական մամուլի կողմից։ Միևնոյն գերմանական մամուլը ամենավճռական կերպով ժխտում է գերմանական նաւակառուցման ծրագիրը կրճատելու հնարաւորութիւնը, երբ այդ առաջարկութիւնը բղխում է Անգլիայից։ Փոխանակ զանազան ենթադրութիւնների դիմելու, գերմանական մամուլը աւելի լաւ կանէ նպաստել այն երկպառակութիւնների նպաստաւոր հարթման, որոնք միշտ կարող են ծագել երկու հարևան մեծ պետութիւնների միջև, որոնք թէև կապված են միմեանց հետ երկարամեայ բարեկամութեամբ։ Գերմանացի հրապարակախօսները ի զուր տեղն են գանգատվում, թէ ռուսաց մամուլը թոյն է սերմանում։ Ռուսաստանը նոյնպէս բաւականին անբարեացակամ մարդիկ ունի գերմանացի հրապարակախօսների թւում, սակայն այստեղից չէ հետևում այն, որ ռուսաց և գերմանական կառավարութիւնները մտադիր են խաչ դնել ռուս-գերմանական բարեկամութեան առասպելի վրա»։

ՎԱՐՇԱՎԱ.—Թագաւոր Կայսրից յօգուտ ռուս ուսանողների 5,000 ռուբլու նուիրաբերութեան առիթով համալսարանի վարչութիւնը որոշեց հեռագիր ուղարկել ժողովրդական լուսաւորութեան մինիստրին խնդրելով առ ոտս Նորին Մեծութեան արկանել ամենահնազանդ հպատակութեան զգացմունքների արտայայտութիւնը:

ԹԻՖԼԻՍ.—Հեռագրական Գործակալութիւնը տեղեկացնում է, որ հեռագրաթելերի փչանալու պատճառով շատ տեղերից հեռագիրներ ստացված չեն:

ԼՈՆԴՈՆ.—Ծովային մինիստրութեան ծախքերը եկող տարվայ համար կազմում են 51,550,000 ֆունտ: Նախահաշւով նախատեսված է կառուցանել 4 զրահանաւ, 4 յածանաւ և 12 հակատականաւ:

Կառավարութիւնը քիչ մնաց պարտութիւն կրէր համայնքների պալատում զօրքի բիւջէի առիթով սկսված վիճաբանութիւնների ժամանակ: Օպպօզիցիան առաջարկեց կրճատել նախահաշիւը, որ մերժվեց 249 ձայնով ընդդէմ 212-ի:

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների պալատում քննվում է զօրքի վերակազմութեան հարցը: Ժօրէսի և Լեֆէվրի ճառերից յետոյ, որոնք մատնանշեցին, թէ նոր օրէնքները ազդեսիվ բնաւորութիւն չեն կրում, զինւորական մինիստրը բացատրեց զօրքի կազմը ուժեղացնելու պատճառները և մատնանշեց, որ նոր նախագիծը նպատակ ունի համաձայնեցնել զօրքի կազմի ձևակերպութիւնը երեքամեայ ծառայութեան օրէնքի հետ: Նոր օրէնքը ընդունվեց 415 ձայնով ընդդէմ 105-ի:

ԲԵՐԼԻՆ.—Րէյխստագում, օդային հաղորդակցութեան օրինագծի առաջին ընթերցման ժամանակ, հռետորների մեծ մասը այն կարծիքը յայտնեց, թէ անհրաժեշտ է օդային հաղորդակցութիւնը կանոնաւորել միջազգային համաձայնութեամբ:

ԲԵՆԳԱԶԻ.—Լատինի զօրամասը գիշերս ենթարկվեց թշնամու յարձակման, որ թւով մօտ 2000 հոգի էր: Թշնամին յետ մղվեց, կորցնելով 363 սպանված: Իտալացիների կորուստներն են. սպանված 2 օֆիցէրով և վիրաւորված 9 օֆիցէր. զինւորներից սպանված 43, վիրաւոր 100:

ՆԻՒ ԵՕՐԿ.—Վախճանվեց օդային արգելիչ շղթան (տորմօզ) հնարող Վէստինգաուզը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Դոստոևսկին, չեմ յիշում իր ո՞ր գրուածքում, պնդում է, թէ ֆանտաստականը կազմում է հէնց իրականութեան էութիւնը:

Իսկապէս, երբ խորանում ես տիրող կեանքի բոլոր կողմերի մէջ, երբ թափանցում ես շրջապատի հասարակական մթնոլորտը, այն ատեն աներկբայ ու րէալ ճշմարտութիւնը մեզ թւում է անհաւատալի, անիրական երազ. իրականութիւնը դառնում է յիրաւի ֆանտաստիկ... Կոնտրաստներ, հակամէտ երևոյթներ—ահա այն բնորոշ յատկութիւնները, որոնք միացնում, շաղկապում են իրար իրականը ֆանտաստականի հետ, ճշմարիտը՝ անհաւատալիի հետ:

Հեռուն հարկ չէ գնալ. բաւական է թերթել հայ հասարակական կեանքի վերջին ժամանակների պատմութեան էջերը:

Կոնտրաստնե՞ր ենք ասում, հակադրութիւննե՞ր, որոնք ոչ թէ բնական առողջ երևոյթներ են, նորմալ իրերի տրամաբանական հետևանքներ, այլ պաթալօգիական երողութիւններ, ախտաժէտ օրգանիզմի այլասերման, հիւծման հետևորդներ:

Մեռնում է անկելանոցում մի վտարված, արհամարհված ու ամենքից մոռացված նախկին հասարակական գործիչ ու մանկավարժ՝ Աբրահամ Յովհաննիսեանը. և ահա Հայ Գրողների Ընկերութիւնն յարգում է նրա յիշատակը յոտնկայս... իր ուրախ ժամանակի երեկոյթում՝ թառերի, քեմանչաների, երգերի ու պարերի ժխորում:

Հայ բանաստեղծը, որ հանապազ գիւղացու դարդերն և ուրախութիւնները, գիւղի բնութիւնն ու կացն է գեղարուեստօրէն արտայայտել, նոյն այդ գիւղացիութեան գըլխին պատուհաս դառնում, նրա անողոք կեղեքման գիտակցօրէն մասնակցում, լոկ իր նիւթական գոյութիւնն ապահովելու համար: Մի բանաստեղծ, որ գեղեցկի ու բարու, սիրոյ ու բարոյականութեան վսեմ գաղափարների ջատագով է հանդիսանում իր երգերում, պորտաբոյծ իր գոյութեամբ, ոտնակոխ արած ամեն մի ամօթ, այս ու այն հարուստի փեշերն է լիզում և շնորհիւ տաղանդաւոր պարագլուխ հակումների՝ կարողանում է տարեկան մի քանի հազարների եկամուտ իրան ստեղծել:

Մի այլ գրող, որ իր գրական կոչումը շահագործում է հասարակական մակաբոյծի ագահութեամբ, իր յոբելեանի առիթով ժողոված մի քանի հազար րուբլիները, ժողոված վերջին կոպէկներով, գրօշներով խեղճ ու կրակ հայ ուսուցիչներից, չքաւոր ինտելիգենտներից, վաշխառուական տոկոսներով պարտք է տալիս սրան ու նրան:

Նախկին մի հայ խմբագիր, «հասարակական գործիչ» ու երբեմն հրապարակախօս լինելու յաւակնութիւն ունեցող, խաբեբայ խոստումներով կորզում է մի քանի ուսուցիչներից հազարների մուրհակներ և ապա նրանց խեղդում, սնանկացնում, դիմելով ամենաստոր միջոցների, որ չէր թոյլ տայ իրան ամենայետին պրօֆեսիօնալ վաշխառուն անգամ, և ի վերջոյ խայտառակ աճուրդի հանում նրանց հեղինակութիւններն ու հրատարակութիւնները:

Ո՞ր մէկը թւես, ո՞ր մէկը յիշես այսօրինակ ֆանտաստիկ, առաջին հայեացքից անհաւատալի փաստերի, որոնք, աւա՜ղ, ամուր բուն են դրել մեր իրականութեան մէջ ու քաղաքացիութիւն ստացել մեր հասարակական բարքերում:

Չը կան գաղափարներ, չը կան դաւանանքներ համապատասխան այն իրականութեան, որը հասարակական բարձր իդէալներ, վսեմ ձգտումների արձագանք պիտի լինի:

Գաղափարների աշխարհում, ինչպէս և հասարակական մեր կեանքի բոլոր կողմերում տիրում է քաօս, ուր էապէս ծաղկում են այնպիսի կոնտրաստներ, գոյութիւն են ստանում այնպիսի խայտառակ էջեր, որոնք միանգամայն պատիւ են բերում հայ սնանկացած իրականութեանը:

Գաղափարները, իդէալները չորացել, քարացել են գործնականութեան, սառն օգտամոլութեան ծալքերում: Հասարակական մըտքի ջարդված փշուրների, տապալված բեկորների վրա միայն սանձարձակ պար են բռնում մեր հասարակական տականքները, որոնք օրվայ հերոսներ են դարձել, մեր իրականութեան տնօրինողները: Գործնականութիւնը այն դեվիզն է, որով այսօր հասարակական գործունէութեան ասպարէզը զարկելի շահատակութեան կրկէս է դարձել, բազմաթիւ homo novus-ների բաղձալի գոյութեան զէնք, շատ-շատերի անձնական կեանքի կառուցման միջոց:

Հասարակական կեանքը անգաղափար մըթնոլորտում նոյն է, ինչ որ հացաբոյսերի աճումը չորութեան մէջ: Գաղափարը, իդէականը գոլորշիացել է ոչ միայն հասարակական կեանքից, այլ և մեր բարոյական աշխարհահայեացքից:

Մի՞թէ հնարաւոր էր գաղափարական հասարակութեան մէջ տեսնել, որ գլուխ բարձրացնէին խոլոր զանազան բաղդախնդիրներ և սանձարձակ դեր խաղային մեր կեանքում, իբրև ազգու գործիչներ, որոնք եթէ խիղճ ու ամօթ ունենային, պիտի գետին մտնէին, եթէ համեստութիւն ու չափ ունենային՝ մութ անկիւններ պիտի փախչէին, թագնվէին:

Մի՞թէ հնարաւոր է գաղափարական հասարակութեան մէջ երևակայել, որ գրականութիւնն ու մամուլը ամենքի աչքին թող փչէր, միամիտներին յիմարացնէր, ստեղծելով ֆէտիշներ, ինկարկելով կուռքեր, որոնց պէտք է ցախաւելով դուրս շպրտել, գետին թաւալել:

Ահա հասարակական այն խեղդուկ մթնոլորտը, որի ախտահանման մասին ոչ ոք չէ մտածում, ոչ մի բան չէ ձեռնարկվում. իսկ կոնտրաստները՝ քանի գնում աւելանում են, մթնոլորտը քանի գնում այնքան հեղձուցիչ դառնում և հասարակական այդ տիպի հերոսները աւելի լկտի, աւելի համարձակ հանդէս գալիս. մի մթնոլորտ, որտեղ սերունդներ են կրթվում ապագայ հասարակական կեանքի համար:

Նիմանդ

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

Թիֆլիս, 27 փետրվարի

Հայոց դպրոցական ֆօնդի համար Թիֆլիսի թեմում մինչև օրս հանգանակված է 15,982 ր. 68 կ.: Այդ գումարից յօբելեանների ծախք եղել է 1144 ր. 48 կ.: Գումարների մի մասը՝ 762 ր. 62 կ. և 312 ր. 30 կ. սինոդին է փոխադրել Ախալցխայի փոխանորդը և Ախալքալաքի գործակալը. 5583 ր. Թիֆլիսի վաճառականների պատգամաւորութիւնը, 4536 ր. 93 կ. փոխադրել եմ ինքս ներկայացնելով դրա հետ միասին ծախքի փաստաթղթերը և լրագրութեան միջոցով տպելով նուիրատուների համառօտ ցանկը:

Այսօր սինոդին եմ փոխադրում դարձեալ 3643 ր. 30 կ., որ հանգանակվել է հետևեալ անձանց և հաստատութիւնների միջոցով:

Ուղարկելով նրանց ցուցակը խնդրում եմ հաճել տպագրել:

1) Քարվանսարայի ծխատէր Մեսրոպ ք. Էզիլեանի միջոցով 127 ր. 50 կ., 2) Ախալքալաք գիւղի գործակալ Յարութիւն քահ. Միրիմանեանի ձեռքով հանգանակած Կաւթիսխև գիւղից 2 ր. 30 կ., 3) նոյն գործակալի միջոցով Ձեգվի գիւղում հանգանակած 7 ր. 25 կ., 4) Ներքին Կարմիր-Աղբիւր գիւղի հասարակութիւնից 11 ր., 5) Ղազախի Ա. մասի գործակալ Զաքարիա ք. Ապրեսեանի միջոցով՝ ա) Ղազախի հասարակութիւնից 71 ր. 35 կ., բ) Սև Քար գիւղից 25 ր. 20 կ., գ) Սոփ գիւղից 10 ր. 30 կ., դ) Դիլիջան աւանից 42 ր. 85 կ., 6) Սուխումի գործակալ Եղիշէ ք. Տէր-Եղիազարեանի միջոցով 228 ր. 21 կ., 7) Լոռու գործակալի միջոցով 156 ր. 32 կ., 8) Ախալքալաքի գործակալի միջոցով 31 ր. 10 կ., 9) Սաչխերէթ գիւղի հոգաբարձութեան միջոցով 26 ր. 50 կ., 10) քաղաքիս Զգրաշէն եկեղեցու հոգաբարձութիւնից 26 ր., 11) Յովսէփ Խունունցի միջոցով 700 ր., 12) Յովհաննէս Տէր-Միրաքեանից 10 ր., 13) Գէորգ Մելիք-Ղարագէօզեանից 25 ր., 14) Ղևոնդ ք. Մամիկոնեանի միջոցով 20 ր., 15) Եղնիկ ք. Ալխազեանի միջոցով 22 ր. 50 կ., 16) Արշակ քահ. Միսսեեանի ձեռքով 70 ր., 17) Սարգիս ք. Օտեանի ձեռքով 15 ր., 18) Միրխաուլ գիւղի հարալակութիւնից 12 ր., 19) Յարութիւն ք. Շախեանի միջոցով 21 ր., 20) Ղօճաբէկ գիւղի ծխատէր Բագ. ք. Արզումանեանից 16 ր. 80 կ., 21) Արդուինի գործակալի միջոցով 104 ր. 91 կ., 22) ի յիշատակ թէլաւեցի հանգուցեալ Տէր-Սարգսեանի՝ Յ. Ղարիբեանի ձեռքով 250 ր., 23) Դուշէթի գործակալի միջոցով 30 ր. 25 կ., 24) Ստեփաննոս աւ.-քահ. Սամուէլեանի միջոցով 10 ր., 25) ուսուցիչ Սիմէօն Քարիմեանի միջոցով 12 ր., 26) Շամշադինի գործակալի միջոցով 36 ր., 27) Գ. Թաթոսեանի միջոցով 15 ր., 28) Համազասպ աւագ քահ. Տէր-Յովհաննէսեանի ձեռքով 15 ր., 29) Գաբրիէլ աւ.-ք. Տէր-Գաբրիէլեանի ձեռքով 8 ր., 30) քաղաքիս ուպրավայի հայ ծառայողներից 211 ր. 50 կ., 31) «Մշակի» խմբագրութիւնից (առաջ ևս ստացել եմ 492 ր.) 508 ր., 32) Շուլավէրի գործակալից 24 ր. 24 կ., 33) քաղաքիս տրամվայի ծառայողներից Ա. Պիճիկեանի միջոցով 25 ր., 34) «Հորիզոնի» խմբագրութիւնից 634 ր. 20 կ., 35) Հայոց թատրոնական վարչութիւնից 96 ր. 2 կ., 36) «Հայոց գրիտոնը» գրքի վաճառումից 30 ր.: Ընդամենը 3643 ր. 30 կոպէկ:

Այն անձինք, որոնց մօտ գտնվում են նուիրատուութեան թերթեր, խնդրում եմ վերադարձնել ինձ:

Առաջնորդ Թիֆլիսի թեմի՝
Մեսրոպ եպիսկոպոս

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան բիւջէն 1908 թւին կազմել է 45.907,159 րուբլի. մինչդեռ 1913 թւին այդ գումարը հասել է 136.737,360 րուբլու:

Այդ գումարից Անդրկովկասի տարրական կրթութեան համար 1908 թ. յատկացվող նպաստը եղել է 749,935 րուբլի, իսկ մինչև 1913 թ. յունվարի 1-ը այդ գումարը հասել է մինչև 3.600,585 րուբլու:

1908 թ. Կովկասի ուսումնական շրջանային վարչութեան բիւջէն կազմել է 9,360,518 ր., իսկ 1913 թւին հասել է 18,579,807 ր., այսինքն աւելացել է 49,62%-ով: 1908 թ. շրջանում եղել է 2839 կրթական հիմնարկութիւն, իսկ մինչև 1913 թ. յունվարի 1-ը դրանց թիւը հասել է 4114-ի, այսինքն աւելացել է 45%-ով: Սովորողների թիւը 1908 թւին եղել է 287,632, բայց մինչև 1913 թւի յունվարի 1-ը այդ թիւը հասել է 393,981-ի, այսինքն աւելացել է 106,349 հոգով կամ մօտաւորապէս 37%-ով:

1908 թւից մինչև 1913 թիւը Կովկասում բացվել են 3 արական գիմնազիաներ, 9 պրօգիմնազիաներ և 5 րէալական դպրոցներ:

Մտադրութիւն կայ այժմ Կովկասում բանալու նոր իգական գիմնազիաներ և պրօգիմնազիաներ, 6 ուսուցչական ինստիտուտներ և 19 ուսուցչական սեմինարիաներ:

Մտադրութիւն կայ նոյնպէս 1914 թ. 84 դպրոցներ բանալ արհեստաւորական, առևտրական և գիւղատնտեսական:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երկրաշարժ Զաքաթալայում

Զաքաթալա, 26 փետրվարի

Երէկ երեկոյեան ժամը 7 և 50 րոպէին քաղաքումս զգացվեց երկրաշարժի խիստ ցնցում, որ տևեց 2—3 վայրկեան: Ցնցումները զգացվեցին արևմուտքից արևելք և այնքան ուժեղ էին, որ տեղիս ծերունիները երբէք չեն յիշում այդպիսի բան: Հարիւրաւոր անձինք մեծ ու փոքր՝ մի քանի վայրկեանում իրանց տներից փողոց նետեցին իրանց, կարծելով թէ աշխարհիս վերջն է, և երեսները դէպի երկինք յառած աղօթքներ էին մրմնջում, հեռացնելու գալիք զարհուրելի վտանգը, սնակնկալը... Կան տների պատերի ճեղքուածքներ և այլն:

Ժողովուրդը այսօր ահ ու սարսափի մէջ է, ամենքի տրամադրութիւնը խիստ ճնշված է:

Սօյգադէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ժամհարեան գիւղատնտեսական դըպրոցի կանոնադրութիւնը, հաստատված երկրագործութեան մինիստրութեան կողմից, ստացվել է Թիֆլիսում: Առիթ ունենալով ծանօթանալ այդ կանոնադրութեան հետ, մենք տեսանք, որ թէև դասաւանդութիւնը պէտք է լինի պետական լեզուով, բայց հայերէն լեզուին ևս բաւական մեծ տեղ է տրված և նրա ուսուցումը պարտադիր է դպրոցի հայ աշակերտների համար: Հայ աշակերտները պէտք է կազմեն ամբողջ աշակերտութեան $^{2}/_{3}$-ական մասը: Բացի դրանից հոգաբարձութեանը տրված է լայն իրաւունքներ, ինչպէս տնտեսական, նոյնպէս և մանկավարժական կազմի վերաբերմամբ: Յաջորդ անգամ առաջ կը բերենք կանոնադրութեան էական կէտերը:

◆ Փետրվարի 27-ին, հինգշաբթի օրը, կոմսուհի Ե. Ա. Վորոնցով-Դաշկովայի նախագահութեամբ կայացաւ դժբաղդ դէպքերին շուտափոյթ օգնութիւն հասցնող կոմիտէի նիստը, որտեղ քննվեց Թիֆլիսում շուտափոյթ օգնութիւն հասցնող ընկերութիւն հիմնելու հարցը: Այդ նիստում քննվեց նոյն կոմիտէի այս տարվայ նախահաշիւը: Կոմիտէը առձեռն դրամ ունի մօտաւորապէս 1700 րուբլի: Որոշվեց կոմիտէի միջոցները ուժեղացնելու համար միջոցներ ձեռք առնել:

◆ Փետրվարի 27-ին կայացաւ պոլիտեխնիկումը կառուցանող գլխաւոր կոմիտէի [illegible]

◆ Երկրագործութեան դեպարտամենտի գլխաւոր կառավարչի Կովկասի լիազոր Կ. Ի. Շաշկովսկի մեկնեց Երևան:

◆ Այսօր, կիրակի, ցերեկվայ ժ. 2-ին Դիդուբէում, Դիդուբէյսկայա փողոցի վրա, տեղի կունենայ 2-րդ մանկական ապաստարանի հիմնարկութեան հանդէսը: Ապաստարանի պատուաւոր հոգաբարձուհին է ստատս-դամա կոմսուհի Ե. Ա. Վորոնցովա-Դաշկովան:

◆ Երէկ Պետերբուրգ մեկնեց մասնաւոր և քաղաքային հիւանդանոցների վերահսկիչ Ֆ. Լ. Ֆեխտեր, որ կանչված է Պետերբուրգ, որպէս փոխարքայի ներկայացուցիչ մասնակցելու սանիտարական օրէնսդրութիւնը քննող միջմինիստրական յանձնաժողովի նիստերին:

◆ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը որոշել է 22,000 ր. յատկացնել դպրոցին ճանապարհ շինելու համար, որ շարունակութիւնն է լինելու Պորոխովի նրբափողոցի: Եւ որովհետև այդ նոր ճանապարհը պէտք է անցնի երկաթուղու գծի տակից, այդ պատճառով քաղ. վարչութիւնը դիմել է Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան՝ թոյլ տալ ճանապարհն անցնելու տեղում չորս սաժէն լայնութեամբ մի կամուրջ շինել:

◆ Ինչպէս յայտնի է, Կադետսկի կորպուսում, Ալիխանովի քաղցրաւենիների [illegible] թունաւորման դէպքեր: [illegible]

◆ [illegible] է նշանակված [illegible] վարում:

◆ Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկ. շէնքում, այսօր, մարտ 2-ին, [illegible] «Կոտ[illegible]» [illegible] տիկ. [illegible] վրացերէն [illegible] ցունքները» [illegible] 5—6-ը, [illegible] համար [illegible] ֆլիսի [illegible] ցոյց կը [illegible] ձրի է:

◆ [illegible] ներին [illegible] ղանակ [illegible] առատ [illegible]

◆ Տպագրվել են և շուտով լոյս կը տեսնեն Բ. Իշխանեանի [illegible] թիւնները [illegible] ժողովրդների [illegible] պրոֆ[illegible] կական [illegible] «Экономическія и общественныя основы армяно-грузинскаго антагонизма» [illegible] լով:

◆ [illegible]

◆ [illegible]

◆ Այսօր, մարտ 2-ին, [illegible] 12-ին [illegible]

◆ [illegible]

◆ Այսօր, ժամը 12-ին, Վրաց Թատրոնի [illegible] «Վրա[illegible]» [illegible]

◆ [illegible] մարտ 23-ին:

◆ Այսօր, Զուբալովի անուան Ժողովրդական Տան [illegible]

◆ Երէկ, շաբաթ, ցերեկ. ժամը 12 1/2-ին «Тифл. Листокъ» [illegible]

◆ Այսօր, կիրակի, մարտ 2-ին, տեղի է ունենալու Ալէքսանդր Քիշմիշեանի յուղարկաւորութիւնը դէպի Նորաշէնի եկեղեցին և թաղումը՝ Խօջիվանքի գերեզմանատանը:

◆ Ինչպէս տեղեկացանք, հանգուցեալ Ալէք. Քիշմիշեան թողել է մի յիշատակարան, որ պարունակում է չափազանց հետաքրքրական նիւթեր պատմութեան համար:

◆ Գայիանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը և մանկավարժական խորհուրդը հետևեալ որոշումն են կայացրել հանգուցեալ Ալ. Քիշմիշեանի վերաբերմամբ. 1) Հոգաբարձական և ուսուցչական կազմով, վեցերորդ և եօթերորդ դասարանների հետ ներկայ լինել թաղման յուղարկաւորութեան. 2) աշակերտուհիներից մէկին ազատել ուսման վճարից և համարել սան Ալ. Քիշմիշեանի անուան. 3) պսակի փոխարէն 25 ր. յատկացնել դպրոցի աշակերտական սեղանատան յօգուտ չքաւոր աշակերտուհիների: Հանգուցեալը եղել է այդ դպրոցի խնամակալներից մէկը և սկսած 1872 թւից դասատու բնագիտական առարկաների մինչև փակումն 1884 թ.:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Р. Вѣд.»-ում կարդում ենք. «Ռուսաց հեղինակաւոր շրջաններում ներկայ քաղաքական դրութեան վրա նայում են իբրև անցողական շրջանի վրա: Մինիստրների խորհրդի նոր նախագահը նշանակված [illegible]

◆ [illegible]

◆ [illegible]

ՌՈՍՏՈՎԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փետրվարի 28-ին, երեկոյեան ժամը 9-ին, [illegible] № 28 տանը, որ պատկանում է [illegible] 350 րուբլու [illegible]

◆ [illegible]

◆ Փետրվարի 27-ին, Թաբխկայա փողոցի վրա բնակվող Դուշէթի գաւառի Կվեմօ-Բօբօլի գիւղի բնակիչ Գէօրգի Մօրտեբաձէի տանը ուգարից ուշագնաց եղան նրա կին Մինան և 4 երեխան, որոնք 7-ից մինչև 1 տարեկան են։ Շուտափոյթ բժշկական օգնութիւն հասցվեց, բայց և այնպէս երեխաներից մէկը մեռաւ։

ԳԻՏՈՒԹ. ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄՈՌԱՑՎԱԾ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կ. Ֆլամմարիօնի)

Մարդկութիւնը այնպէս է պարծենում վերջին դարերի գիւտերով ու հնարագիւտութիւններով, որ մինչև անգամ լսել չէ կամենում, թէ այդ հնարագիտութիւններից և գիւտերից շատերը կատարված են շատ առաջ, բայց անհետացել են երկրի երեսից, որպէս զի նորից երևան գան։

Անհնար է մէկ-մէկ թւել այն բոլոր գիւտերը, որոնք մի քանի անգամ են կատարվել, բայց անշուշտ հետաքրքրական է կանգ առնել նրանցից աւելի նշանաւորների վրա։

Նոր պատմութիւնը պարծենում է իր տեսողական գործիքներով՝ հեռադիտակներով, խոշորացոյցերով և այլն։ Այն ինչ՝ կլասիքական հեղինակներից ոմանք, Օրինակ, Պլինիոսը յիշում է ծովային աւազակ Մարցիոսի մասին, որը մի այնպիսի գործիք ունէր, որի միջոցով նա Սիցիլիայի ափերից դիտում էր այն նաւերը, որոնք հեռանում էին Աֆրիկայի ափերից։ Միթէ դա հեռադիտակ չէ եղել։

Հներն ասում են, որ ասորական և եգիպտական արձանագրութիւններն այն աստիճանի մանր են եղել, որ նրանց հասարակ աչքով կարդալն անհնար է եղել։ Արդեօք այդ արձանագրութիւնները գրելու համար հարկաւոր չէ՞ն եղել խոշորացոյց ապակիներ։

Ուռուցիկ ապակիները գործ են ածվել որպէս այրեցող ապակիներ. Վեստայի քըրմուհիներն այդ ապակիները գործ էին դնում սրբազան կրակը վառելու համար, իսկ բժիշկները գործ էին ածում վէրքերն այրելու համար, որի մասին յիշատակում են յունաց պատմիչները, ի թիւս որոց Արիստոֆանը, Եւկլիդէսը, Լակտանցիոսը, Արիստոտելը և ուրիշները։ Վերջապէս ալէքսանդրիացի նշանաւոր աստղաբաշխ Կլաւդիոս Պտղոմէոսը մի ամբողջ աշխատութիւն է գրել տեսական օպտիկայի մասին, մի աշխատութիւն, որի վրա ուշադրութիւն են դարձրել միայն անցեալ դարի սկզբում։

Օրինակ, ո՞վ չը գիտէ, թէ եգիպտացիների, պարսիկների և քաղդէացիների մէջ աստղաբաշխութիւնը որպիսի՜ բարձր աստիճանի զարգացման է հասած եղել։ Եթէ եգիպտացիները իրանց բուրգերի կառուցման ժամանակ մագնիսական սլաքը չունենային, այն ժամանակ ինչպէս կարող էին այդ բուրգերն այնպէս ճիշդ կերպով յարմարեցնել հիմնաւոր կէտերում։

Հնդիկների, նոյնպէս և յոյների մէջ աստղաբաշխութիւնը կանգնած է եղել բարձր աստիճանի վրա. դրա համար բաւական է յիշել այն, որ դեռ ևս Պիւթագորասը լուսինը մի մոլորակ էր համարում, որ իր լոյսն ստանում է արեգակից, իսկ երկիրը մի մարմին, որ պտտվում է արևի շուրջը։

Որ եգիպտացիք ծանօթ էին շանթարգելին, դա, ըստ երևոյթին, ամեն կասկածից դուրս է։

Ինչ վերաբերում է վառօդին, նորագոյն պատմութեան այդ պարծանքին, այժմ արդէն անկասկած է, որ ոչ միայն վառօդը, այլ մինչև անգամ հրացանը շատ խոր հին ժամանակներում յայտնի են եղել հնդիկներին։

VIII դարում արդէն նրանցում յիշատակվում է, որ վառօդն ստացվում է բորակից, ծծումբից և ածխից։ Բացի դրանից՝ նրանցում յիշատակվում է մի ինչ-որ երկար, նեղ և մի ծայրից փակված խողովակի մասին, որի մէջ դրվում էր վառօդը։ Շատ հաւանական է, որ այդ խողովակը մեր հըրթիռն (ракета) է եղել։

Ցետոյ հնդկական երկու գլխաւոր պօէմաների մէջ խօսվում է ինչ-որ «Աստուածային հրազէնի» մասին։

Սուէզի ջրանցքը և նրա փորելը համարվում է նոր ժամանակի հրաշքներից մէկը։ Այն ինչ՝ դեռ ևս փարաւոնների ժամանակ Միջերկրական և Կարմիր ծովերի մէջ ջրանցք է անց կացրված եղել, որի մասին յիշատակում է Հերոդոտոսը։

Ինչ վերաբերում է ամենամեծ ճանապարհորդութիւններին, սովորաբար կարծում են, թէ Վասկո-դէ-Գաման է գտել Բարեյուսոյ հրուանդանի ճանապարհը. այն ինչ՝ Վասկո-դէ-Գամայից 2200 տարի առաջ նոյն ճանապարհով անցել են փարաւոնի Նեքօյի հրամանով և այն էլ սկսած Սև-ծովից ամբողջ Աֆրիկայի չորս կողմովը, յետոյ Գիբրալտարովը դէպի Միջերկրական ծովը և ապա Եգիպտոս։

Կոլումբոսից հինգ դար առաջ իսլանդացիք ափ են իջել Անդրատլանտեան մայր ցամաքի վրա և մի ամբողջ դար իրանց երթևեկութիւնը շարունակել են այնտեղ։

Յունական մաթեմատիկոս և ճանապարհորդ Պիթէասը Ալէքսանդր Մեծի մահից յետոյ դուրս է եկել Մարսէլից, անցել է Անգլիա, Հիւսիսային ծովը. պտտել է Նորվէգիայի շուրջը և շատ ու շատ բարձրացել է դէպի հիւսիս։ Այդ նոյն ճանապարհը «յայտնագործվել» է և յետագայում։

Վերջապէս Ստեֆենսոնից և Ուատտից 100 տարի առաջ ֆրանսիացի Դենի Պապինը շինել է շոգեշարժ նաւակ և գործ է ածել Վէզերի վրա, ուր նա ոչնչացել է։ Նոյն Պապինը նոյնպէս պատրաստել է և շոգեշարժի մօդէլը։

Եթէ մենք ցանկանայինք մէկ-մէկ թւել այն բազմաթիւ մանր-մունր գիւտերը, որոնք պատկանում են հնութեան, բայց որոնք սեփականացրել են վերջին ժամանակի գիտնականները, այն ժամանակ դա վախճան չէր ունենայ։ Միայն թող վերը առաջ բերված փաստերը մի քիչ մեղմացնեն այն անձանց եռանդը, որոնք ենթադրում են, թէ հին ազգերը խոշոր գիւտեր անելու մէջ շատ ապարդիւն են եղել։

Թարգմ. Ց. Վարդանեան

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կախէթի բազմաթիւ գիւղերով շրջապատված կենտրոնավայր Սղնախում լոյս տեսնող «Խմա Կախէթիսա» լրագրի անցեալ համարներից մէկում «Դավիծղէբուլի» (Մոռացված) ստորագրութեամբ տպված է մի յօդուած, որ վերաբերում է գիւղական վարժուհիներին։

Յօդուածագիրը արձանագրելով այն փաստը, որ Կախէթ-քիզիղի գիւղական դպրոցներում բոլորն էլ նշանակվում են վարժուհիներ, երկիւղ է կրում, որ, եթէ յետագայում էլ այսպէս շարունակվելու լինի, վարժուհիները կը բռնեն ուսուցիչների տեղը և այդպիսով գիւղը կը զրկեն «ինտելիգենտ ույժերից»։

Ճշմարիտ է,—ասում է յօդուածագիրը,—ուսուցիչներն էլ դպրոցից դուրս չեն աշխատում գիւղական կուլտուրական ասպարէզներում, բայց այսպէս թէ այնպէս էլի սրանց ենք մենք հանդիպում հասարակական գործերին մասնակցելիս, իսկ վարժուհիները ներկայ պայմաններում անկարող են այդ անելու և այլն։

Միջնակարգ դպրոցաւարտ աղջիկը սովորած լինելով Թիֆլիսի ուրախ կեանքին, ներկայացումներին և Գօլօվինսկի պրօսպեկտին, Թիֆլիսում պաշտօն չը գտնելուց յետոյ՝ միանգամայն անփորձ և դրսի կեանքին անծանօթ՝ ընկնում է ակամայից գաւառը ու տխուր-տրտում անց կացնում օրերը, մինչև որ արձակուրդներին քաղաք վերադառնալ կը կարողանայ։ Իսկ մինչ այդ, նա դառնում է իր մեծերի հլու հպատակը, որպէսզի լաւ երևայ նրանց և քաղաքից մօտիկ որևէ տեղ լաւ պաշտօն տան իրան և այլն։

Յօդուածագիրը խոստովանվելով հանդերձ, որ կան ուսուցիչներ, որոնք վարժուհիներից թէև բարձր չեն, ասում է, թէ ներկայ պայմաններում ինքը դէմ է գիւղերում վարժուհիներ նշանակելուն, չը նայելով այն հանգամանքին՝ որ, ինչպէս ինքն է ասում, «հակառակ չէ կանանց և ոչ էլ նրանց իրաւունքները ճնշողներից»...

Այս բոլորը մեզ հասցնում է այն տխուր եզրակացութեան, որ մեզանում կանանց «լաչաքով» պահելու հնացած տրադիցիան դեռ ևս ունի իր զօրեղ պաշտպանները։

Այլապէս ինչով բացատրել այն երևոյթը, որ քսաներորդ դարի հրապարակախօսը դէմ է միևնոյն գիտութիւնով օժտված կանանց մեր գիւղերում վարժուհի նշանակվելուն...

Եւ այդ այն ժամանակ, երբ մարդկութիւնը ամեն կերպ աշխատում է մի խոշոր ուղղումն մտցնել իր պատմութեան էջերից մէկում, տալով հաւասար իրաւունք նոյնիսկ անգրագէտ կանանց...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 13 փետրվարի

«Մշակի» № 28-ում Ռոստոմ Թումանեանը հերքում է իմ՝ «Մշակի» № 11-ի գրածը, որպէս հրէշաւոր զրպարտութիւն։

Պարոն Թումանեան, քո կառավարչական գործունէութեան և արարքների մասին դեռ ոչ մի քննութիւն չի եղել, որ ժողովուրդը յայտնէր իր ծով ցաւերը, ձեր ձեռքից քաշած զրկանքները։ Մարցայ կալուածքից ոչ մի հողահարկ չէ պահանջվել մինչև բաժանման օրերը։ Գալով տուրքերին, միայն Մարցն է, որ վճարել է իր վրա դրված տուրքերը սկսած 1870 թ. յունվարի 2-ից, Տէր-Աբրահամեանի կալվածատութեան օրից։ Մարցն է որ վէճի ժամանակ և մինչև այսօր մնացել է հլու հպատակ ու հաւատարիմ իր եկեղեցուն, որի կառավարչից ներկայումս կեղեքված է ու պատժված։

Պ. Ռ. Թումանեան, դուք ինքներդ էք խոստովանում, որ ձեր կառավարութեան օրօք Մարցայ կալուածքի անտառից ոչ մի ծառ կամ ճիւղ չի կտրված, և նա է միակ կանգուն անտառը։ Շատ ճիշդ է. իսկ ձեր գրած կեղծ և անհիմն պրօտօկօլները ծըտեղից յօրինեցիք (որոնց չափը կարելի է Լօռու հաշտարար դատարանում ստուգել) և ձեռքիդ միակ զէնքը դարձրիք ժողովրդին քերթելու։ Գալով ձեր այն հարցին, թէ ես էլ մէկն եմ Մարցայ անտառը արտահանողներից, որ ապրելուս հեշտ աղբիւրը ցամաքել է և ես խեղդվում եմ, այդ մասին թէ նախկին կառավարիչները, թէ գիւղական ժողովուրդը և թէ կօնսիստօրիայի մատեանները կապացուցանեն ձեր զրպարտութիւնը։ Ճիշդ է, մի անգամ ես կաղնի տախտակներ գնել եմ տակառի համար մարցեցիներից, այն է Քալագերան կայարանում։ Գալով իմ գրած նամակին, այդպիսի նամակներով շատ եմ դիմել ձեզ կամ եղբօրդ, որպէսզի կարող լինէի ձեր կեղծիքների հետ ծանօթանալ, բայց դուք միշտ խոյս էք տուել ինձանից և չէք ուզեցել որ ձեր գաղտնիքը իմանան այն մարդիկ, որոնք հրապարակում կը խօսեն։

Պ. Ռ. Թումանեան, եթէ ես ձեզ ամբաստանում եմ, այդ մասին խօսէք, և եթէ կարող էք հերքեցէք իմ գրած կենդանի փաստերը, փոխանակ հին դարմանը քամուն տալու և հայոյ-հրոյով ուրիշի աչքերին թող փչելու։ Աստատանեցների պէս առաջներդ քննողները իրանց զաեավլենիայով պիտի արդարացնեն ձեզ։ Ասենք թէ մի ժամ ձեր իմ վրա բարդած մեղադրանքը զրպարտութիւն չէ, ուրեմն և դուք իրաւունք ունեցաք այդքան ծով յանցանքներ գործելու և արդարանալու. ոչ։ Հէնց դուք ձեր ենիշխութիւնը կուսակցութեան դիմակի տակ էք կատարել և այդպիսով ժողովրդի վրա ազդել և արատ ձգել այդ կուսակցութեան անուան։ Շամշուլդեցի ծերունի Ահարոնը չէր որ մինչև 20 մարդով ծնկաչոք աղերսում էր եղբօրդ Յովհաննէսին՝ ազատել իրանց ձեր բռնակալ ճանկերից, որի օրօրով դեռ մինչև այսօր ննջում են ողորմելիքը։

Երկար խօսելը աւելորդ է։

Սրանով ես հրաւիրում եմ ազգի ուշադրութիւնը և առաջարկում ու խնդրում ընտրել միջնորդ դատաւորներ իմ և եղբ. Թումանեանների գործունէութիւնը քննելու համար։ Այն ժամանակ միայն երևան կը գայ, թէ ո՛վ է կուլակը, վաշխառուն, կեղեքիչը, ժողովրդի իսկական ցեցը, ժողովրդի և վանքի հաշւով ապրողը։

Վարդան Տէր-Գրիգորեան

—

Թիֆլիս, 21 փետրվար

Օրեր առաջ «Հորիզոնը», այսօր էլ «Մշակը» հաղորդեցին, որ Թիֆլիսի Թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը երկու այլ քահանաների հետ և ինձ է ենթարկել պատասխանատուութեան, կախակայելով երկու ամիս քահանայագործութիւնից՝ հայհոյական խօսքեր արտասանելու համար։

Որովհետև լրատուն ճիշդ չէ արտայայտվել և ընթերցող հասարակութիւնը, մանաւանդ իմ ծխականներս կարող են մոլորութեան մէջ ընկնել, թէ իրանց քահանան հայհոյող է, պարտքս եմ համարում հետևեալ բացատրութիւնը տալ։

Ես չեմ հայհոյել, հայհոյելու սովորութիւն չեմ ունեցել մանկութիւնից. հայհոյութիւնը և հայհոյողներին միշտ ատել եմ. բայց երբէք չեմ քաշվել ամեն մի իրի և ամեն մարդու իր իսկական անունը տալ։

Այդ՝ իմ համոզմունքով հայհոյանք չէ։

Օրինակ՝ եթէ մէկը սովորութիւն ունի, չի քաշվում փողոցային անպատկառ հայհոյանքներ ասել, ես իրաւունք եմ համարում ինձ նրան փողոցային անուանել ոչ թէ վիրաւորելու, այլ խրատելու ցանկութեամբ։

Ահա այսպիսի մի դէպքի համար է, որ հոգևոր իշխանութիւնս ինձ վերոյիշեալ պատիժը տուեց, մինչդեռ ես սնուցանում էի իմ մէջ հաստատ հաւատք, որ իշխանութիւնս ինձանից աւելի պիտի վրդովվէր և պաշտպանէր իմ յանիրաւի ոտնահարված պատիւը։

Ես ինձ թոյլ չեմ տայ քննադատել իմ իշխանութիւնը, սակայն ես իրաւունք ունէի սպասելու, որ վճիռ արձակելուց առաջ գործ դրվէին օրէնքի տարրական պահանջները, որպէսզի հնարաւորութիւն ունենայի ինձ արդարացնելու։

Այդպէս չեղաւ. ի բացակայութեան վճիռ կայացվեց և վերաքննելու խնդիրս անհետևանք թողնվեց։

Այս պատճառով՝ ես ինձ խորապէս ցաւած եմ համարում։ Որովհետև ես չեմ կարողանում համոզվել, որ ես յանցանք եմ գործել։ Իմ վիճակիս մէջ ոչ ոք այլ կերպ չէր կարող վարվել։

Բայց միթէ այս վճռով դատապարտվեց սոսկ Յովսէփ ք. Տէր-Պետրոսեանը. իմ խորին համոզմունքով՝ ոչ. դատապարտվեց քահանայի, հոգևորականի պատիւը, վարկը։

Այժմ ո՛վ չէ քահանային անպատիժ հայհոյում։ Եւ երբ մարդիկ կը համոզվեն, որ քահանայի պատուազգացութիւնն էլ է պատժվում, կը տեսնենք թէ ինչե՞ր կը կատարվեն այսուհետև։

Ահա թէ ինչն է ինձ խորապէս վշտացնում։ Իմ մէջ խօսում է վշտացած քահանայութիւնը, արհամարհված քահանայութիւնը, անպաշտպան քահանայութիւնը։

Ոչ թէ իմ անձը, որ այսօր կայ, վաղը կարող է չը լինել, այլ քահանայութեան պատիւը [illegible] ունէր պաշտպանել իմ հոգևոր իշխանութեան առաջ. բայց այդ ինձ չաջողվեց։

Արդարև, միթէ ամեն երևոյթի, ամեն բանի իր իսկական անունն տալը հայհոյանք է և ոչ պարտաւորութիւն։

Ես Աւետարանի պաշտօնեայ եմ. իմ բոլոր գործողութիւններիս մէջ, իմ բոլոր յարաբերութիւններիս մէջ առաջնորդվում եմ և պիտի առաջնորդվեմ իմ Աւետարանով։ Թերթենք Աւետարանը, տեսնենք՝ ես մեղանչե՞լ եմ նրա ոգու դէմ։

Յովհաննէս Մկրտիչը այսպիսի շանթեր է արձակում իր անզիջանիկ քարոզը լսող սադուկեցիներին, դպիրներին, մանաւանդ փարիսեցիներին.

«Ծնունդք իժից, ո՞ ցոյց ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոց է»։

Ոչ մի քահանայ, ոչ մի դատաւոր չի ասի, որ այս կծու, սուր սլաքի նման վիրաւորող խօսքերը հայհոյանք է. այս պատճառով էլ մինչև այսօր Յովհաննէս Մկրտիչը մնում է բոլոր լեզուների ու ազգերի մէջ՝

«Մեծն ի ծնունդս կանանց»։

Կարդանք Մատթէոսի ԻԳ. գլուխը. ամբողջը յաւիտենական դատապարտութիւն է բոլոր դարերի դպիրների ու փարիսեցիների։

«Առաջնորդք կոյրք... կեղծաւորք... փարիսեցի կոյր... գերեզմանք բռեալք, լի ամենայն պղծութեամբ»։

«Օձք, ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցուք ի դատաստանէ գեհենոյն...»։

Այսպէս է որակում մեր Տէրը և Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս իր վարդապետութեան խոչընդոտներին։

Մի ուրիշ տեղ իրանից ողորմութիւն խնդրող հեթանոս կնոջն ասում է.

«Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց»։

Նոյն իսկ չէ խնայում երկրի թագաւորին.

«Երթայք ասացէք աղուէսուն այնմիկ. ահաւասիկ հանեմ դևս և բժշկութիւնս կատարեմ այսօր և վաղիւ և յերիր աւուր կատարեմ»։

Եթէ այս բոլորը հայհոյանքներ են և ոչ կոչման պարտականութեան իրաւունք, ապա փակեցէք եկեղեցիները, որովհետև այնտեղ շարունակ այդ խօսքերը կրկնվում են երկնային ոգևորութեամբ։

Ուրեմն եկեղեցին հայհոյում է։

Հեռու մոլորութիւնը։

Եկեղեցին, բարձր աշխարհային բոլոր սովորութիւններից, էտիկէտներից, փարիսեցիական մանր բծախնդրութիւններից, տալիս է և պէտք է ու պարտաւոր է տալ իւրաքանչիւրին իր իսկական անունը։

Ու դրա մէջ է նրա վեհութիւնը, անդրաշխարհային լինելը։

Ես էլ, իբրև Աւետարանի պաշտօնեայ, Աւետարանով դաստիարակված ու ներշնչված, իմ պարտաւորութիւնս ու իրաւունքս եմ համարում, իբրև դաստիարակչական ազդեցիկ միջոց, ամեն երևոյթի, ամեն բանի և իւրաքանչիւր մարդու իր իսկական անունը տալ։

Եւ այդ բնաւ հայհոյութիւն չեմ համարում։

Սակայն իշխանութիւնն էլ ունի իր տեսակէտը, ինձ այս դէպքում միանգամայն անյայտ, որով և ղեկավարվելով արձակեց յայտնի վճիռը։

Իմ պարտքս էր հնազանդվել և հնազանդվեցի։

Այս՝ սկզբունք է։

Միայն իմ մէջ մնաց մի անշէջ ցաւ, կսկիծ, որ ես հնարաւորութիւն չունեցայ պաշտպանել քահանայի ոտնահարված պատիւը, քահանայութիւնը։

Եւ նա ընկաւ։

Յովսէփ ք. Տէր-Պետրոսեան

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Սևան, 20 փետրվ.

Հրապարակով յայտնում եմ իմ և Սևանի միաբանութեան խորին շնորհակալութիւնը Բագուի Հայոց Կուլտ. Միութեան հրատ. մասնաճիւղին, որը, իմ խնդրի համաձայն, բարեհաճել է նուէր ուղարկել Սևանի մատենադարանին 48 կտոր ընտիր գրքեր ի յիշատակ վերոյիշեալ Միութեան նորոգ հանգուցեալ հիմնադիր Կոստանդին Խատիսեանի, որի համար անցեալ կիրակի եկեղեցում ս. պատարագից յետոյ բոլոր միաբանների մասնակցութեամբ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց։

Յարգանք Կ. Խատիսեանի անմահ յիշատակին։

Սևանի վանահայր՝ Սարգիս եպիսկոպոս

—

Թիֆլիս, 27 փետր.

Նորաշէնի ս. Մարիամեան օր. ուսումնարանի հոգաբարձութիւնս ստացաւ նորոգ հանգուցեալ Ալ. Յ. Քիշմիշեանի ամուսնուց, ժառանգներից և բարեկամներից, դագաղի վրա պսակ դնելու փոխարէն՝ 1) Եւգենիա և Կոնստանդին Կրասինիկեանց ամուսիններից՝ 100 ր., 2) այրի Թամարա և դուստր Հեղինէ Քիշմիշեաններից՝ 55 ր., 3) Անահիտ և Վաղարշակ Տէր-Գրիգորեան ամուսիններից՝ 50 ր., 4) Մարիամ Կրասինիկեանից՝ 25 ր.։ Յիշեալ գումարով պահվելու է դպրոցումս հանգուցեալի անունով մի չքաւոր աշակերտուհի։

Հոգաբարձութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը հանգուցեալի այրուն, ժառանգներին և բարեկամներին։

Հոգաբարձու՝ Ս. աւ. ք. Շիօյեանց

—

Բօրժոմ, 26 փետրվարի

Խորին շնորհակալութիւնս եմ յայտնում պ. Լ. Հէպլիպեանին և Հ. Յակոբեանին, որոնցից առաջինը իր հանգուցեալ հօր՝ Աշոտ Հէպլիպեանի յիշատակին նուիրեց տեղիս դպրոցին 10 ր., իսկ երկրորդը՝ իր հանգուցեալ հօր՝ Եղիշէ Յակոբեանի յիշատակին նուիրեց նոյն դպրոցին 5 ր.։

Վարդան քահ. Վարդանեան

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ

PAX

Խաղաղութեան երրորդ կոնֆերենցիան.—Վաշինգտոնից ստացված մի հեռագիր, փետրվարի 3-ից, յայտնեց Եւրոպային, որ Ամերիկայի Միացեալ-Պետութիւնների նախագահ Մ. Վիլսոնը հրաւիրում է աշխարհիս զանազան երկրների կառավարութիւնները ուղարկել իրանց պատուիրակները Խաղաղութեան երրորդ կոնֆերենցիան, որ պէտք է գումարվի Հաագա քաղաքում 1915 թ. ամառվայ ընթացքում։

Հաւատացնում են, որ Հոլլանդիայի Վիլհէլմին թագուհու խնդրանօքն է, որ ամերիկական մեծ հանրապետութեան նախագահը ստանձնել է այդ փառաւոր նախաձեռնութիւնը, որ հրճուանք է պատճառում երկրագնդի բոլոր պացիֆիստներին։

Ամերիկա և Շվէյցարիա.—Շվէյցարիայի ներկայացուցիչը Վաշինգտոնում և Բրիանը ստորագրել են յունվարի 17-ին այն համաձայնութիւնը, որով որոշված է այսուհետև այն բոլոր վիճելի հարցերը Շվէյցարիայի և Միացեալ-Պետութիւնների միջև, որոնք չեն կարողանում հարթվել դիպլոմատիայի միջոցով, ենթարկել մի միջազգային յանձնաժողովի, բաղկացած 5 անդամներից։

Նոյնպիսի մի համաձայնութիւն կայացել է հոլլանդական և ամերիկական արտաքին գործերի մինիստրութիւնների միջև։

Միջազգային իրաւունքի ակադէմիա.—Որոշվել է հիմնել Հաագա քաղաքում, ուր շինված է Անդրէյ Կարնէջիի ծախքով Խաղաղութեան հոյակապ պալատը, միջազգային իրաւունքի մի ակադէմիա, որով իրագործվում է հոլլանդացի նշանաւոր իրաւագէտ, այժմ հանգուցեալ Տ. Ասսէրի բաղձանքը և ծրագիրը։ Այդ ակադէմիայում պէտք է դասախօսեն միջազգային իրաւունքի ամենաականաւոր պրօֆէսորները, ուստի և աշխարհիս ամեն կողմից ուսանողները կը գան լսելու նրանց։ Ակադէմիայի հիմնարկութեան ծախքերի համար անհրաժեշտ գումարն արդէն պատրաստ է։

Մարդկային իրաւունքների դաշնակցութեան նոր նախագահի ընտրութիւնը.—Ֆրանսիս դը Պրէսանսէի մահվամբ դաշնակցութեան նախագահի պաշտօնը թափուր մնացած լինելով, այդ պաշտօնին կոչվել է մի արժանաւոր յաջորդ, որ է Ֆերդինանդ Բուիսսօնը, պատգամաւոր ֆրանսիական պարլամենտի, որ խաղաղասիրական դատի գլխաւոր պաշտպաններից մինն է և նոյնպիսի անվեհեր արիութեամբ կը պաշտպանէ ազգերի, ինչպէս և հասարակ քաղաքացիների դատը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՓԵՐԻՑ

Ուրմիա, 10 փետրվարի

Արդէն մի շաբաթ է որ իր պաշտօնի մէջ է այստեղի նոր հիւպատոս պ. Վվեդենսկին, որ Թաւրիզում փոխ-հիւպատոսի պաշտօն էր վարում։

Ընդառաջ էին գնացել բոլոր հայ վաճառականներն ու զանազան առևտրական հիմնարկութիւնների ներկայացուցիչները, վարչական, դատական և այլ պաշտօնեաներ, նաև հասարակ ժողովրդից։ Բազմաթիւ դիմաւորողների մէջ էր նաև նախկին, ժամանակաւոր հիւպատոսի պաշտօնակատար պ. Ուսպէնսկին, որ վաճառական դասից մի մասին մէկ-մէկ ներկայացրեց պ. Վվեդենսկուն՝ դիմաւորութեան վայրում։

Քաղաք հասնելուն պէս նրան ընդունեց զինւորական երաժշտական խումբը մի պատշաճ մարշով։

Այդ օրը քաղաքի բոլոր գլխաւոր փողոցներում տիրում էր մի հոգեպարար կենդանութիւն, որին նպաստում էր նաև լաւ եղանակը։

Ասում են, որ Ուրմիա եկած հիւպատոսներից ոչ մէկի ընդունելութիւնը այսքան շքեղ ու հանդիսաւոր չի եղել։ Դա կարելի է բացատրել նաև նրանով, որ դեռ պ. Վվեդենսկին այստեղ չը հասած՝ հասարակութեան մէջ նրա մասին խօսում էին շատ նպաստաւոր. շեշտում էին նրա մէջ անաչառութիւն, ուղղամտութիւն, տոկունութիւն և կամքի ույժ։ Յատկութիւններ, որոնք առինքնում են հասարակութեան ամեն մի գիտակից անհատի և անկասկած խիստ բարերար ազդեցութիւն պիտի անեն այն մարդկանց վրա, որոնք միշտ և ամեն մի հասարակ բանի համար քծնում են՝ կորցրած իրանց մարդկային արժանապատւութիւնն ու հոգու հպարտութիւնը. կորցրած մաքուր անկեղծութիւնն ու բարոյական հաւասարակշռութիւնը։ Դժբաղդաբար այդպիսիների թիւը շատ է Ուրմիայում։ Սողում են նրանք մարդուց ցած՝ կեղտերի և ճահիճների մէջ։ Դրանք հասարակութեան ժահրոտ վէրքերն են, անպիտան տարրերը, որոնց պէտք է անդամահատել, մաքրել... Անդամահատութեան սուր դանակը գտնվում է այժմ Վվեդենսկիի ձեռքին։ Նրա դատաստանին են յանձնված նաև այդ մարդկանց մշտական կենսական գործերը. անմիջական կախման մէջ են նրանք։

Հիւպատոսն Ուրմիա հասնելուն պէս հետաքրքրվեց ռուսահպատակ հայերի վաճառականութեան ընթացիկ վիճակով, թէ ո՛վ ինչով է զբաղվում, ինչ չափով է սպառվում ռուսական ապրանքը։ Դրա համար կարգադրեց անմիջապէս կազմել վաճառականական ժողով և իրան մանրամասն տեղեկութիւն տալ։ Ժողովները տեղի ունեցան վաճառականապետ պ. Գր. Մանասէրեանի տանը, ուր երկու-երեք օր ժամերով խորհրդակցելուց յետոյ ներկայացրին իրանց տեղեկագիրը Վվեդենսկուն։ Թէ ինչ էր պարունակում այդ տեղեկագիրը՝ յայտնի չէ, որովհետև վաճառական դասը այդ պահում է որպէս գաղտնիք։ Տարօրինակ երևոյթ. միթէ այդպիսով կը գտնվի աջողութեան գաղտնիքը...

Միայն պիտի ասել, որ այստեղ՝ Ուրմիայում ռուսական ապրանքը շատ քիչ է սպառվում, մեծ չափով սպառվում են աւստրիական, գերմանական, անգլիական և այլն ապրանքներ։ Մօտ ապագայում երկաթուղին կը փոխի բոլորովին իրերի ներկայ դրութիւնը...

Բայց ռուսական քաղաքական ազդեցութիւնը զօրեղ է այստեղ։ Ուրմիայի բոլոր վարչական հիմնարկութիւնները գտնվում են ռուսական իշխանութեան անմիջական ազդեցութեան տակ։ Նահանգապետից սկսած մինչև հասարակ պաշտօնեան, դատարանից սկսած մինչև յետին սէյիդը (այդպէս են կոչվում Մահմէդի յաջորդները), քարգուզարը (քրիստոնեաների դատաւոր) և այլն գոյութիւն ունեն միայն անուանապէս։ Իսկական դատարանը ներկայանում է ռուսաց հիւպատոսարանը։ Բոլոր գործերի ղեկը գտնվում է հիւպատոսի ձեռքին։ Զարմանալին այն է, որ պարսիկներն իսկ ճանաչելով իրանց դատարանի անզօրութիւնը՝ միշտ դիմում են հիւպատոսարան։ Վերջերս մի մարդասպանի կախաղան բարձրացնելու համար՝ դատավճիռը գործադրելու իրաւունքը հիւպատոսից խնդրեցին։ Եթէ վերջինիս այլ կարգադրութիւն անէր, պարսիկ դատարանը չէր համարձակվի կախել ոճրագործին։ Մարդասպանութիւնը կատարվել էր դրամական խնդրի պատճառով՝ երեք օր առաջ։ Ահա այսքան բարձր է ռուս քաղաքական իշխանութիւնը այստեղ։

Խօսք կայ, որ շուտով այստեղ բացվելու է ռուսական պօստի պաշտօնական բաժանմունք, որից օգտվելու ազատ պիտի լինի նաև հասարակ ժողովուրդը։ Ի դէպ պիտի ասեմ, որ այստեղ տեղական պօստային գործը շատ անբաւարար և անկազմակերպ հիմքերի վրա է գտնվում [illegible] Շաբաթական ընդամենը երկու անգամ է գալիս, այն ինչ եւրոպական ամենայետ ընկած քաղաքում կամ գիւղում օրական մի անգամ անպայման ստացվում են թարմ լուրեր և տեղեկութիւններ։ Թողնենք դեռ այն քաղաքները, ուր օրական երկու և աւելի անգամներ պօստ է մտնում։ Նամակացրիչներ չը կան. պօստի օրը ժողովուրդը հաւաքվում է պօստատան դուռը՝ նամակներ ստանալու համար. ըստեղծվում է մի բաբելոնական խառնակութիւն։ Մարդ յաճախ ստիպված է լինում երկար սպասելու և գործից լինելու։ Որչափ վատ է լինում, երբ երկար սպասելուց յետոյ նոր ես իմանում, որ նամակ էլ չունես։ Դրա վրա աւելացրու նաև այն, որ փողոցներում նամակարկղներ չեն կախված և պօստատունը հեռու է շատերից, այն ժամանակ հասկանալի կը լինի թէ որչափ մեծ բարիք արած պիտի լինի ռուսաց իշխանութիւնը՝ բանալով ռուսական պօստ, որ, անկասկած, անհամեմատ աւելի լաւ և յարմար հիմքերի վրա կը լինի դրված։

Սարքի գինը բոլորովին ընկած է այստեղ. պահանջ չը կայ։ Այդ առևտուրով զբաղվողները անհագին վնաս են անում. առաջ պուդը ծախում էին 2 ր. 55 կ., իսկ այժմ՝ 2 ր. 35 կոպէկով, որից 20 կոպէկը զուտ վնաս է, ըստ վաճառականների։

Փետրվարի 13-ին, Վարդանանց տօնի առիթով, ուսուցչական խումբը կազմակերպել էր մի աշակերտական հանդէս՝ ծնողների համար։ Արդիւնքը, որ 33 թուման եղաւ, յատկացված է մանկական գրադարանին։

Հ. Ժամկոչ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համաձայն, անգլիական թագաւորական զոյգի հետ Պարիզ այցելելու է նաև արտաքին գործերի մինիստր սըր Էդուարդ Գրէյը։ Անգլիական մինիստրի արտասահման այցելելը հանդիսանում է մի արտառոց դէպք։ Ըստ տրադիցիայի, արտաքին գործերի մինիստրները իրաւունք չունեն այցելել ոչ մի օտարերկրեայ պետութեան։ Այդ տրադիցիայից հրաժարվելը ապացուցանում է, թէ որքան սրտագին են անգլօ-ֆրանսիական յարաբերութիւնները։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ նորից ֆրանսիացի, ամերիկացի, ունգարացի և բումին դրամատէրեր, նկատի առնելով Թիւրքիայի դրամական ճգնաժամային կացութիւնը, դրամ են առաջարկում նրան ափիոնի կամ նաւթի վաճառման մենավաճառութիւնը իրանց ձեռքը ձգելու նպատակով։

◆ Այս շաբաթում սկսվելու են իտալական ռազմի նաւատորմի վարժութիւնները Ադրիատիկ ծովում։ Վարժութիւններին մասնակցելու են նաև աէրօպլաններ և ստորջրեայ նաւեր։

◆ Անգլիական քաղաքական շրջանները և մամուլը, ինչպէս հեռագրում են Լօնդօնից, զայրոյթ են արտայայտում, որ գերմանական մամուլը շարունակում է իր յախուռն հակառուսական ագիտացիան։ Լրագիրները ընդգծում են այն փաստը, որ բալկանեան պատերազմի ժամանակ Ռուսաստանն էր, որ ամեն կերպ աջակցեց եւրօպական խաղաղութեան պահպանմանը։

◆ Թէհրանից հեռագրում են, որ մէջլիսի պատգամաւորներ են ընտրվել Թէհրանի կողմից մէջլիսի երեք էկս-նախագահներ, երեք էկս-մինիստր և վեց բարձրաստիճան հոգևորական։

◆ Բերլինից հեռագրում են, որ ըստ լուրերի համաձայնութիւն է կայացվելու Գերմանիայի, Իտալիայի և Անգլիայի միջև, որի նպատակն է լինելու ներհակել այն իրաւունքին, որ Ռուսաստանին հնարաւորութիւն պէտք է տայ ազատօրէն անց կացնել իր ռազմի նաւերը Դարդանելով։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ գեներալ Սանդերսի կարգադրութեամբ զինուորական դատարանին են յանձնըվում այն թիւրք ուսանողները, որոնք զինուորական ինժեներական դպրոցում յարձակվել էին գերմանացի ուսուցիչների վրա։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ էկս-սուլթան Աբդիւլ-Համիդին բժիշկները կենդանի են պահում մորֆի սրսկելով։ Ամեն րօպէ սպասվում է նրա մահը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտովսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մանկաբարձական (?) ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրօտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—16

Вотанъ
ЛАМПА СЪ ГЯНУТОЙ ПРОВОЛОЧНОЙ НИТЬЮ
ПРОДАЕТСЯ ВСЮДУ.
ՌՈՒՍԱԿԱՆ ԱԿՑ. ԸՆԿ. „ՍԻՄԷՆՍ-ՇՈՒԿԿԵՐՏ“ Թիֆլիս, Գօլօվինսկի պր. 21.
(կ.) 88. 0—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8, Սեմեօնովսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում։ Բժշկի բնակարան Սեմեօնովսկայա, № 16.
(չ. ու. կ.) 804. 100—61

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ“

Անեկդոտների և սրախօսութիւնների ու Մօլլա Նասրէդդինի ընտիր առակների ժողովածու։ Գրքի երեսին սյս նկարը մեծ գիրքով։ Գինն է 20 կոպ.։ Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին և կազմողին՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. А. Г. Есаянцу. Գրքի գինը և ճանապարհի ծախսը 9 կոպ. մարկաներով ուղարկել առաջուց։ Գումարով ուզողներին 100 հատը կէս գնով, այսինքն 50% զեղչ. 50 հատին 40% զեղչ. 25 հատին 30% զեղչ։ Ճանապարհածախսը գնողի վրա։ Գումարով ուզողները պէտք է դրկեն կանխավճար, մնացեալը վերադիր վճարով։
(օ. մ.) 29. 20—20

Բժշկ. Ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ
1) «Դաղձնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և աղամարդ(?) մէջ վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ բեչեչաններով, խորհուրդներով և նկարներով։ Ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Ծիծաղի տկճոր», ծիծաղաշարժ անեկդօտների և Մօլլայի ընտիր առակների ժողովածու, տկճորի նկարը գրքի երեսին՝ էջեր ծիծաղաշարժ։ Գինը 20 կ.։
3) «Մրեւսոյն դագաղում», պատմուածք հայ թուրք. կախիներից. գիւղերի նկարն.։ Գինը 7 կ.։
4) «Բաճբճի» պատկերով։ Գինը 10 կ.։
Այս բոլոր գրքերը միասին պահանջողներին ձրի ուղարկում եմ «Կենկարմոտի սավարը» ծիծաղաշարժ վօդրվիլը։ Գրքերի գինը և ճանապարհածախսի համար 17 կօպ. մարկաներ առաջուց ուղարկել։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9, А. Г. Есаянцу.
(չ. կ.) 44. 100—98

Փականա-Մեխանիկական
= ԱՐՀԵՍՏԱՆՈՑ =



ՉԱՅՐՎՈՂ
ԴՐ ԲԻ
ԱՄ ԱՐԿՂ ՆԵ
=ՎԵՐՆԵՐ ՊՖԷՅԼ=
Վօկզալնայա փ. № 3.
(օ. մ.) 100. 100—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ Է
ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆԻԻ
ՄԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ-ը
Հայ Բնաշխարհի կեանքէն 15 ինքնատիպ դրուագներ։
Գինը 50 կոպ. կամ 6 ղրուշ։
Դիմել՝ «Գուտտէնբերգ» և «Գիր» գրավաճառանոց։ Կենտրոնատեղի՝ Կ. Պոլիս, Չագմագճըլար Սեպահեան խան № 33, հեղինակին քով։
(օ. մ.) 153. 5—5

Լոյս տեսաւ
ՄԵՍԷ
ՈՎՍԱՆԻԿ
պատմական վէպ (աւանդութիւն), ժողովրդի ընթերցանութեան համար։
ԳԻՆԸ 70 ԿՈՊ. (ճանապարհածախսով)։
Կարելի է ուղարկել պօստի մարկաներով։
Գումարով գնողներին 30% զեղչ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Новая Жизнь» Лазару Карапетяну. Նոյն տեղից կարելի է ստանալ ամեն տեսակ գրքեր։
(կ.) 170. 2—2

ԱԿՑ ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ
Ինժեներ Գ. Զ. Եարալեան և Ընկ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, 9, սեփ. տ.
Տնօրէնի տէլէֆօն № 9, Կառավարչի բնակարան 14—78.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԼՐԻՒ ՍԱՐՔԱՒՈՐՈՒՄՆ
Գիդրօ-շոգե-նաւթա-էլեկտր. կայարանների՝ առանձին աւտոմատիկ յարմարութիւններով, որոնք ազատում են կայարանների վերաբերմամբ ունենալիք հոգսութիւններից։ Ջրհոր, սառցային, սառույց պատրաստող, փոխեմաքրիչ ջրաբաշխական կայարանների։ Վերանորոգումն և սարքաւորումն ջրաղացների, փայտասղոցարանի, բամբակազտիչ, ձիթահան և ուրիշ պատրաստող գործարանների։ Կատարելագործված վերելակների՝ մարդկանց և ապրանքների համար։ Կառուցում է—Շարժիչներ և մեքենաներ բոլոր տեսակի տեխնիկ. և գիւղատնտես. նպատակների համար։ Կատարում է—Ամեն տեսակ կաթսայի, կամուրջային և այլ մետաղային աշխատանքներ։ Պատրաստում է—Արտասահմանեան ֆիրմաների նորագոյն ձևերով շքեղ դարպասներ, ցանկապատներ, պատշգամբներ, բակեր և այլն։ Նախագծեր և նախահաշիւներ բոլոր մատնանշված աշխատանքների համար։
(կ.) 175. 25—1

Գործարանը պատրաստում է պատենտային գիդրավլիկ մեքենաներ՝ աւտոմատիկ կերպով ջուր բարձրացնելու համար։ Բազմաթիւ սարքաւորական պարագաներ։ Խոշոր պարգևներ՝ ստացված ցուցահանդէսներում։

Գործարանը ձուլում է համաձայն պատուիրողների մօդէլների և մակարդակների, բոլոր մեքենաների չուգունէ մասերը, մինչև 50 պուդ մի կտորի մէջ, մշակմամբ (обработкой) և առանց նրան։ Չուգունէ շարժիչ-թևեր, ճախարակաւորիչներ, տրանսմիսսիաներ և այլն։ Պղնձէ ձուլուածքներ և արմատուրներ։

ԻՆԺԵՆԵՐՆԵՐԻ ՃԵՄԱՐԱՆ ՎԻՍՄԱՐ ՔԱՂԱՔԻ (ԳԵՐՄԱՆԻԱ)
Բաժանմունքներ՝ մեքենակառուցման, էլեքտրօտեխնիկական, շինարարական և ճարտարապետական։ Յատուկ դասախօսութիւններ երկաթէ-բետօնի մասին։ Ընդունելութեան պայմանները միջնակարգ կրթական հաստատութիւնների 6-րդ դասարանինն է։ Նոր լաբօրատօրիաներ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
(B. 30443) 24—7

ԱՄՍԱԿԱՆ 100 ՌՈՒԲ. ԵՐԱՇԽԱՒՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ
կարող է ունենալ իւրաքանչիւր տղամարդ կամ կին՝ աշխատելով յարմար կերպով իր ընտանիքում։ Հեռաւորութիւնը խոչընդոտ չէ լինում։ Պայմաններն ուղարկում ենք ձրի։ 1-е Западное Т-во Вязальныхъ издѣлій. Варшава, Капуцинская 13-7. (կ.) (B. 15412) 0—2

ЖИНЪ-ЗЕНГЪ ТИБЕТСК. СРЕДСТВО.
ԿԵԱՆՔԻ ԷԼԷԿՍԻՐ
ԺԻՆ-ՋԷՆԳ
ԺԻՆ-ՋԷՆԳ
1000 տարի է, որ Չինաստանում և Տիբէթում բժշկական նպատակով գործադրվում է չինական հրաշագործ ԺԷՆ-ՇԷՆ արմատը (կենաց արմատ) և պանտերի թանգագին արիւնը (Իզիւբրի եղջիւրներ) որպէս միանգամայն բուժիչ միջոց, և որը, ինչպէս վկայում է չինական աւանդութիւնը, վերադարձնում է մարդու կեանքը և գէն վանում մահը։ ԺԻՆ-ՋԷՆԳԸ պատրաստված է բացառապէս այդ գեղերից. նա մի ամսվայ ընթացքում կատարելապէս և վերջնական կերպով բուժում է սեռական թուլութիւնը, ջղային քայքայումը արեան պակասութիւնը. վերադարձնում է երիտասարդական թարմութիւնն ու աշխուժութիւնը՝ ԺԻՆ-ՋԷՆԳԸ զօրութիւն ունեցող գեղերից լաւագոյնն է և անփոխարինելի։ Սրուակի գինը 5 ռուբ. առանց ճանապարհածախսի։ Ծախվում է դեղատներում և դեղային պահեստներում։ Պահեստը Կովկասի համար՝ Тифлисъ Черкезовская, 83, кв. 5—6. Որպէս անվնասակար դեղ՝ թոյլատրված է Իրկուտսկի Բժշկ. Վարչ.-ից № 4698 գրութեամբ։ Իսկական ԺԻՆ-ՋԷՆԳԸ ունի հետևեալ ստորագր. ղրանց այդ ստորագրութեան եղածները անօգուտ են։
65. 10—9

Իւրիյ Վեսելօվսկիի աշխատութիւնները.
«Армянскій поэтъ С. Шахъ-Азизъ». (Критич. этюдъ и стихотворные переводы. Иллюстраціи худ. В. Суреньянца) . . . . գինը 1 ր 50 կ.
«Литературные Очерки» (Шестидесятые годы и армянскій журналъ въ Москвѣ», ‹Западное вліяніе въ литературѣ русскихъ армянъ», Шиллеръ, Байронъ, Два глашатая терпимости, и др.) . . . . գինը 2 ր.
«Армянская Муза» (въ сотруднич. съ проф. Гр. Халатьянцомъ; до 90 стихотвореній въ переводѣ Бальмонта, Бунина, Бѣлоусова, Чюминой, Ю. Веселовскаго и др.) գ. 1 ր.
«Русское вліяніе въ соврем. армянской литературѣ» (Сундукьянцъ, Ованнисьянъ, Цатуріянъ, Лео, Ширванзадэ, Агароньянъ, Чубаръ и др.) . . . գինը 50 կ.
Հասցէն՝ Москва, Набережная Храма Спасителя, д. Куракиной, кв. 40, Юрію (Георгію) Алексѣевичу Веселовскому. (հ. կ.) 165. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՄԵՇՉԱՆՆԵՐԻ ԱՒԱԳԸ
սրանով յայտնում է Թիֆլիսի մեշչաններին.
1-ին, որ Թիֆլիսի մեշչանների ընկերութեան լիազօրների (պատգամաւորների) ընտրութիւնը երեք տարով (1914—1916 թ.), թւով 100 հոգի, լիազօրների ընդհանուր ժողովի որոշմամբ, որ կայացաւ անցած յունվարի 24-ին և հաստատվեց Թիֆլիսի պ. նահանգապետի կողմից՝ պէտք է կատարվի րայօններով, այսինքն. I րայօնի մէջ մտնում են՝ 1, 2 և 3-դ ոստիկանական թաղամասում բնակվող մեշչանները, II րայօնի մէջ 4, 5 և 6 թաղամ. մեշչ., III րայօնի—7, 8 և 9 թաղ. մեշչ. և IV րայօնի մէջ—10, 11 և 12 թաղ., ըստ որում 100 ընտրվող լիազօրները բաժանված են հետևեալ կերպով. I րայօնից ընտրվում են 18 լիազօրներ, II-ից—28 լիազօր, III-ից—32 լիազօր և IV—22 լիազօր։
2-դ, որ ԱՅԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԵՆ Մեշչանների Աւագինախագահութեամբ, իւրաքանչիւր րայօն առանձին, մեշչանների վարչութեան շէնքում (Վելիկօկնեաժեսկայա, № 17.) առաւօտեան ժամը 10-ին, ՀԵՏԵՒԵԱԼ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ.
Առաջին րայօնը (1, 2 և 3 թաղ.—18 լիազօր) մարտի 9-ին
Երկրորդ » (4, 5 և 6 թաղ.—28 ») մարտի 16-ին
Երրորդ » (7, 8 և 9 թաղ.—32 ») մարտի 23-ին
և չորրորդ » (10, 11 և 12 թ.—22 ») մարտի 30-ին։
Տեղեկացնելով այս մասին, Մեշչանների Աւագը հրաւիրում է Թիֆլիսի մեշչաններին, որոնք օրէնքով ձայն ունեն յիշեալ ընտրութիւնների վերաբերմամբ, մասնակցել վերջիններիս, ՐԱՅՕՆՈՎ, ԻՐԱՆՑ ՆԵՐԿԱՅ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, որի համար խնդրում է ՎԱՂՕՐՕԹ ԵՒ ՀՆԱՐԱՒՈՐ ԵՂԱԾԻՆ ՉԱՓ, ՈՉ ՈՒՇ ՔԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԵՐԿՈՒ ՕՐ ԱՌԱՋ, ձեռք բերել մուտքի տոմսակներ, առանց որի ոչ-ոքի թոյլ չի տրվի մտնել ընտրութեան դահլիճ։
Ընտրական ժողովի մուտքի տոմսակները ԿԸ ՏՐՎԵՆ Մեշչանների Վարչութեան մէջ ԱՄԵՆ ՕՐ ս. տ. մարտի 3-ից սկսած, առաւօտեան ժամը 11-ից մինչև 2-ը ցերեկվայ, բացի կիրակի և տօն օրերից։
Դրա հետ միասին նախօրօք յայտնվում է մեշչաններին, որ ընտրութիւններին օրէնքով մասնակցել չեն կարող, ա) 25 տար. պակաս հասակ ունեցողները, բ) այն անձինք, որոնց իրաւունքը սահմանափակված է 15 յօդ. կանօնադրութեան 582 յօդ. (ծանօթ. 1899 թ. հրատ. օրէնքի I հատոր, IX օրէնսգրքի) և գ) այն անձինք, որոնք մինչև այժմ չեն մտած կամերալնի գրութեան մէջ կամ, որոշած կարգով, մեշչանական վարչութեան ցանկը։
(ա. օ.) 176. 3—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
„ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ“
1914 փետրվար № 2.
1) Ազատութեան արշալոյսին.—Արա-ս, 2) Ես լսում եմ... (բանաստ.)—Լէյլի, 3) Ինձ թւում է... (բանաստ.) Լէյլի, 4) Գաղտնի ոստիկան—Ռէն, 5) Ես աղօթում եմ... (բանաստ.)—Արմենուհի Տիգրանեան, 6) Զորափին—Մ. Արազեան, 7) Նրացներ և ճառագայթներ (Վիկտորիա Աղանուր) Արսէն Երկաթ, 8) Ցուցեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդութիւնից Ա-Դօ, 8) Քննադատական փիլիսօփայութիւն (Իսէի փիլիսօփայութիւն)—Ն. Ցրանգեան, 10) Ռուսահայերի հայագրական զարգացումը XIX դարում, 11) Աշխարհաբարը և աշխարհիկ գրականութիւնը մինչև Խ. Աբովեան—Մարտ Ցարութիւնեան, 12) Ստանիսլաւ Պշիբըշևսկի—Սուրխաթեան, 13) Աւետիք Արասխանեան. Արսէն Տէրտէրեան, 14) ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ—1) Bibliotheca armeno georgica II վիճակագրական տարեգիր ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեց Կ. Կոստանեան—Ն. Աղբալեան, 2) Ոսկէ աղջիկը. ռուս. թ. Լ. Մելիք-Ադամեան.—Սպիտակ տառեղնիկը—Ն. Տելեշօվի, փոխադր. օր. Ն. Գրիգորեան.—Ակ-Բօղատ—Գ. Ն. Մամին-Սիբիրեակի—ռուս. թ. Ս. Թորոսեան—Մ. Ս., 3) Լուսաղէմին—գրական ժողովածու I գրքոյկ—Մ. Ս. 4) «Завѣты» ամսագրի քննադատականը Ն. Ցրանգեանի գերմաներէն գրքի մասին։ 15) ԹԻՒՐՔԻԱ—Տաճկական րէֆօրմները—Ռուբէն, 16) ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ—Աւետիք Տէր-Պօղոսեան, 17) Խմբագրութեան կողմից, 18) Գրքեր և պարբերականներ, 19) Բովանդակութիւն և յայտարարութիւններ։
ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ Ստանիսլաւ Պշիբըշևսկի։
Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ՝ Ռուսաստան—տարեկ. 7 ր. կէս տարվ. 4 ր. երեք ամսվ. 2 ր. 25 կ.
Արտասահման » 24 ֆր. » » 14 ֆր. » » 8 ֆր.
Դրամ և նիւթեր ուղարկել հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская № 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».
ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է № 3-Ը
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
(կ. հ.) 182. 3—2

ԽՕՋԻՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԲԱՀԱՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ վարչութեան որոշման համաձայն, հանգուցեալների գերեզմանների վրա
Ծաղկոցները ջրում է եւ մաքրում
Խօջիվանքի Գրասենեակը։ Ցանկացողներին՝ իրանց ծաղկոցները բարեկարգ դրութեան մէջ տեսնել՝ առաջարկվում է գերեզմանատան Գրասենեակին ջրի և աշխատանքի համար որոշած վարձը վճարել և կարևոր անդորրագրերը ստանալ։ Այն ծաղկոցները, որոնց համար առանձին տուրք չէ վճարված, կը մնան առանց պատշաճաւոր հոգատարութեան։
Նախագահ վարչութեան՝ ԳՐԻԳՈՐԻՍ ա.-ք. ԵՐԶՆԿԵԱՆՑ
185. 2—2

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Թիֆլիսում միակ ռուսերէն լեզուով լոյս տեսնող, ԱՄԵՆՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ, բժշկական ամսագիր
„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ“-ի
1914 թ. բաժանորդագրութիւնը.
Ամսագրի նպատակն է՝ հիւանդութիւնների նախազգուշացումն և առողջութեան պահպանումն։
Ամսագրի մէջ, յայտնի բժիշկների աջակցութեամբ, պարզ և հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։
Բաժանորդագինն է ամբողջ տարվայ համար 3 ՊՐԵՄԻԱՅՈՎ 2 ր.։
1-ին պրեմիան պատի գեղեցիկ «Օրացոյց բժշկարան» 1914 թ., իսկ 2-րդ և 3-րդ պրէմիան բաժանորդների ցանկութեան և ընտրութեան համաձայն կուղարկվեն 2 հատ հետևեալ գրքերից. 1) Домашній лечебникъ (առանձին արժէ 1 ր.), 2) Грѣхи молодости (лечебникъ секр. болѣзней 1 р.), 3) Лечебникъ домашнихъ животныхъ (1 р. 25 к.), 4) Искусственное безплодіе (1 р. 25 к.), 5) Самоучитель гипнотизма (2 р.), 6) (Полный дѣловой письмовникъ (1 р.), 7) Поваренная книга для хозяекъ (1 р.). Պրէմիաները պատրաստ են և կուղարկվեն բոլորովին ձրի լոյս տեսած համարների հետ՝ բաժանորդագինը ստանալուց անմիջապէս։
Բաժանորդագրվել կարելի է և վերադիր վճարով՝ (налож. плат.) 20 կ. աւելի արժէքով, այսինքն բաժանորդները վճարում են պօստին պրեմիաները ստանալուց 2 ր. 20 կ.։
Հասցէն՝ Тифлисъ—М., Вознесенская ул. № 8, главная к-ра ред. „Жур.-Лечебникъ“.
Թիֆլիսում բաժանորդագրութիւնը ընդունվում է նոյնպէս և կենտրոնական գրավաճառանոցում։
(կ. չ. ու.) 165. 10—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный